

## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ\*

Կաթողիկոսին խիստանքիւնը կղերին վրայ.

Կաթողիկոսը կրօնական գլուխ նկատուելով՝ համեմատաբար իր իշխանութիւնն աւելի բարձր է և բացարձակ՝ քան թագաւորի մը իշխանութիւնը իր պաշտօնէից վրայ: Հայկական եկեղեցին, — ինչ որ պատմական ղէպքերը կը վկայեն — իր կաթողիկոսին աւելի միապետական իշխանութիւն մը կ'ընծայէ քան թէ սահմանադրական. և արդէն մինչեւ վերջին դարու մէջ սապէս կը սահմանուէր անոր իշխանութիւնը. « Կաթողիկոսը, իբրեւ գլուխ բոլոր Հայոց ազգէն ընտրուած անձն ունի իրականութիւն խիստանքիւն Հայաստանայց առաջնորդն եկեղեցւոյ վարչութեան վրայ »: (Կարգ և կանոն<sup>1</sup>. գլ. Ա. յօդ. 9):

ա. — Կաթողիկոսը՝ ինքը կ'ընտրէ իր յաջորդը:

Շատ մը օրինակներու մէջէն հետեւեալ ղէպքը: Բարսեղ Ա. Անեցի (1113ին) վարդապետի գիւղին տանիքի մը վրայ աղօթելու միջոց՝ տուճը կը կործանէ և կողը կը կտորի. տեսնելով որ մահացու կերպով վիրաւորուած է՝ գինը Շուղր վանքը տանիւ կը հրամայէ. « Եւ կենդանութեամբ իւրով՝ տայր գտառն հայրապետութեան և զորոն ի Գրիգորէս, որդի Ապիրատին, որ էր քուերորդի տէր վահրամին »:

Այսպիսի ղէպքեր, որ նուազ չեն՝ բացարձակ իշխանութեան օրէնք մը գոյացնել չեն զօրեր. այնպէս որ եթէ մեռնող կաթողիկոսէն ընտրուածը անընդունելի ըլլար կղերին՝ վերջնոյս քուէները կը բաւա-

կանանան ընտրուած կաթողիկոսը գահէն կէց ընելու:

բ. — Հայ կաթողիկոսին վերապահում մ'եղած է Աղուանից և Վրաց կաթողիկոսները ձեռնադրել: Իսկ ընտրելու իշխանութիւնը՝ իւրաքանչիւր ազգին ընդհանրական ժողովոյն իրաւասութիւնն է, և այդ ժողովոյն կը մասնակցին նաեւ իշխանք և թագաւոր: Պատմութեան մէջ (ինչպէս տեսանք նախորդ յօդուածին մէջ) կը հանդիպին մեզի Վրաց կամ Աղուանից կաթողիկոսներ՝ հայ կաթողիկոսէն ընտրուած. ինչպէս օրինակի համար Կիրիոն՝ որ Է դարուն վերջերը մեր Մովսէս Եղիվարդէցիէն Վրաց կաթողիկոս կ'ընտրուի: Պատմիչք՝ իբրեւ եզական ղէպքեր կը յիշեն զասոնք. և այդ ղէպքերը հայ կաթողիկոսին Վրաց կամ Աղուանից եկեղեցինէն ընտրուած զգուշ մը առաջարկելու պատիւն անդին չեն անցնիր:

գ. — Կաթողիկոսը իրեն վերապահած է Սիւնեաց մետրապոլիտը ձեռնադրելու իրաւասութիւնը: Սկզբնական դարերուն մէջ Սիւնեաց մետրապոլիտական ընտրութիւնը կանոնաւոր երեւոյթ մը չունէր, (այսպէս էին նաեւ թեմական եպիսկոպոսաց ընտրութիւնը), ընդհանուր կաթողիկոսը զայս կամ զայն կը ձեռնադրէր այս կամ այն թեմին համար, այսպէս Մեծն Սահակ « անուարկեաց և զԱնանիա աշակերտ Մեսրոպայ՝ Թարգմանիչ և ի ամենայն առաքինութեամբ յեպիսկոպոսոսքին Սիւնեաց, նստիլ ի գահ մետրապոլիտութեան »: Մխիթար Գոշ Արքեպիսկոպոսաց համար կ'ըսէ « Եւ զործ է նոցա ձեռնադրել մետրապոլիտոս ». և ըստ Ն. Լամբրոնացւոյ՝ կաթողիկոսը Արքեպիսկոպոսաց աստիճանը ունի: Կաթողիկոսը Սիւնեաց մետրապոլիտի ձեռնադրութեան իրաւասու-

\* Տես Բագմ. 1906. Թի. 4.

1. Այս համառօտ մեղով պիտի յիշեմ կանոնաց տեսար՝ որ Սուս տէրութիւնը 1863ին՝ Մատթէոս կաթողիկոսին առաջարկեց, որոյ մէջ յարգուած է ըստ բաւականի ազգային աւանդութիւնը. զայս հրապարակեց Մարկոս Աղաբէգեան (այս. կ. Պոլսոյ, 1865): Գորաբար լեզուով եւս մի քանի անգամ հրատարակուած է. տե՛ս օրինակի

համար Մէլիթ-Թարգմանի շայ եկեղեցւոյ իրաւունքը զրգին առաջին հատորը:

2. Հմտ. Մատթէոս Ռուսայեցի. ապ. Երուսաղէմ. համար ՄԺԻ:

3. Տես Սա. Որբեկեան. հրտ. կ. վ. Շահապարի. ԿԷ. ԺԶ:

4. Տես Մեկն. Պատարապի ապ. ի վնեւ. էջ 82-3:

թենէն դուրս՝ բնաւ յարաբերութիւն չու-  
նի թեմին մասնական գործերու և ժողով-  
ներու մէջ:

դ. — Եպիսկոպոսը կամ Գործադիրկո-  
պոսը որոնք կաթողիկոսարանին պիտի  
ծառայեն և կամ թեմի համար չեն որո-  
շուած՝ կարողիկոսէն կ'ընտրուին: Սակայն  
ո՞ր և է եպիսկոպոս որ թեմի մը համար  
պիտի ձեռնադրուի՝ պէտք է որ զայն ըն-  
տրողը՝ ժողովուրդեան խառն ժողովն ըլ-  
լայ: Բայց ընտրութեան մէջ պէտք է հա-  
ւանութիւն տւենայ կաթողիկոսը. ինչպէս  
որ իրաւամբ կը պահանջէ նոյնը փիլիպ-  
պոս կաթողիկոսը իր առ Լովաքիս գրած  
կոնդակին մէջ՝ (յամի 1653). « Ձերբորդ  
պահանջեմ որ ձեր եպիսկոպոսն ի սուրբ  
էջմիածնայ հայրապետէն լիցի ձեռնա-  
դրեալ: և նորին հրամանաւ նստցի այդը »:  
Իսկ ձեռնադրութեան իրաւասութիւնը մի  
միայն կաթողիկոսին է. ինչպէս որ նաեւ  
կարգ և կանոնին մէջ կը գրուի. « կաթո-  
ղիկոսն՝ ինչպէս գլխաւոր տէր և հովիւ  
Հայաստանեայց եկեղեցւոյ, միակայն ինքն  
ունի իրաւունք օծել ստաքիներ և օգտակար  
հոգեւորականներէն եպիսկոպոսն »: Ըստ  
այսմ կաթողիկոսը կրնայ առաջարկուած  
եպիսկոպոսացուն չձեռնադրել, եթէ ունի  
իր դրական պատճառներ:

ե. — Ինչպէս վերեւ ըսինք՝ ի սկզբան  
կաթողիկոսը կ'ընտրէր թեմական եպիս-  
կոպոսները, այդ՝ արդէն Գրիգոր Լուսա-  
ւորչով կը սկսի. « Այնպէս և զեպիսկո-  
պոսունս վիճակեցուցանէր ի գլխաւորութիւն  
ժողովրդոց Տեառն » (Ագաթանգեղ. ՀԵ):

Դեռ ուրիշ օրինակներ մինչև վերջին  
դարերը կաթողիկոսին կու տան թեմական  
եպիսկոպոսաց ընտրութիւնը: — Թէ՛նդո-  
րոս կաթողիկոս՝ 1390 թուականին Լով

քաղաքին թեմական եպիսկոպոս կ'ընտրէ  
և կը ձեռնադրէ զՅովհաննէս՝ առանց ժո-  
ղովրդեան գիտութեան և հաւանութեան »:

Ուրիշ պատմական դէպք մ'ալ կը ցուցը-  
նէ կաթողիկոսին զօրաւոր իշխանութիւնը  
ընտրութեան խնդրոյն մէջ: — Մեղիթէթ  
կաթողիկոսը 1627ին Լեհաստանի Լով  
(կամ Իլով) քաղաքը կ'երթայ. ժողովուրդը  
եպիսկոպոս մը կը խնդրէ իրմէ. « Նիկոլ  
կամ Նիկողայոս՝ ընծաներով կաթողիկո-  
սին սիրտը և զահի և ժողովրդեան կամ-  
քին հակառակ՝ նոյն թեմին վրայ եպիս-  
կոպոս կ'ընտրուի. ձեռնադրութիւնը ծա-  
ծուկ կը կատարուի որպէս զի խռովու-  
թիւն չենէ: Երբ կաթողիկոսը կը մեկնի  
քաղաքէն՝ ժողովուրդը կը հրամայէ Նիկո-  
լին որ ինքն ալ միասին մեկնի: Բայց յե-  
տոյ կաթողիկոսին բանադրանաց թուղթը  
կը ստիպէ զժողովուրդը. և յակամայս՝  
Նիկոլը իրենց եպիսկոպոս կ'ընդունին,  
մինչև որ ուրիշ պատճառներու համար  
խռովութիւնը կ'երկարի ու դարձեալ կը  
մերժեն զինքը »: Ի վերջոյ յաղթանակողը  
կաթողիկոսը կ'ըլլայ. վասն զի 1654ին  
փիլիպպոս կաթողիկոսը կոնդակով մը կը  
ստիպէ ժողովուրդը զՆիկոլ եպիսկոպոս  
ճանչնալ »:

գ. — կաթողիկոսը՝ ինքն անձամբ իրեն  
տեղապահ և աթոռակից ընտրելու իրաւա-  
սութիւն ունի. ինչպէս որ պատմութեան  
օրինակներուն վրայ հիմնուած կը գրուի  
« կարգ և կանոն »-ին մէջ. « կաթողիկոսն  
ընտրում է իրան տեղապահ այն եպիսկո-  
պոսներէն մէկին՝ որ յարգ և պատիւ ու-  
նի Հայոց ազգի և Աթոռի առջեւ »:

ե. — կաթողիկոսը յետ թեմի մը հա-  
մար եպիսկոպոս մը ձեռնադրելու՝ կոնդա-  
կով մը անոր իրաւասութիւն կու տայ իրմէ

Մեր Քրիստոնէութեան նախնական դարերուն մէջ նուազ  
էին կամ ընաւ չկային բաց ի կաթողիկոսէն՝ ուրիշ արք-  
եպիսկոպոսներ. այդ պատճառաւ Հայ պատմիչը ստեղ-  
լեկ արքեպիսկոպոս տիտղոսով կը ճանչնան կաթո-  
ղիկոսը:

1. Տես կամենիցի Ի Հ. Աւելան. էջ 254:

2. « կարգ և կանոն » զԷ. Բ. յօդ. է:

3. Տես Թէոդորոս կաթողիկոսին կոնդակը « կամե-  
նից » գրքին մէջ էջ 9:

4. Տես Առաքել Գաբրիէլեւ. զԷ. ԻԲ:

5. Հմմտ. Փիլիպպոս կաթողիկոսին կոնդակը. (կա-  
մենից, էջ 255):

6. Տես « կարգ և կանոն » զԷ. Գ. յօդ. ա):

ստորինագոյն եկեղեցական պաշտօնեաներ ձեռնադրելու: Ինչպէս թէ՛ ռոգորոս կաթողիկոսը յետ զՅովնաննէս եպիսկոպոս ձեռնադրելու՝ կը ծանուցանէ ժողովրդեան տուած իրաւասութիւնը. « Կոչեացէ զարժանաւորսն և զվկայեալսն ի կարգ և յաստիճան կիսասարկաւագութեան, սարկաւագութեան և քահանայութեան: Կալցի հրամանովս մեր ի վերայ ձեր իշխանութիւն առաքելական, կապել և արձակել յերկրս և յերկրի »:

Կարգ և կանոնը դեռ հետեւեալ ընտրութեանց իշխանութիւնը կաթողիկոսին կը յատկացնէ:

Ը. — « Կաթողիկոսն իր եկեղեցւոյ նախնի կարգերուն և կանոններուն համաձայն ընտրում է Հայաստանեայց եկեղեցւոյ վարչութեան համար, Ա. Տեղապահ, Բ. Կաթողիկոսական խորհուրդ, Գ. Վիճակաւոր առաջնորդներ, որոնք իրանց մօտ խորհուրդներ կ'ունենան »: (Գլ. Բ. յօդ. Ի):

Բ. — « Ամենայն Հայոց կաթողիկոսը, իրրեւ անմիջապէս քահանայապետ Հայաստանեայց եկեղեցւոյ, իրաւունք ունի արձակել, փոխել կաթողիկոսական խորհրդոյն անդամներին, վիճակաւոր առաջնորդներին իրանց պաշտօնէն, նայելով իր եկեղեցւոյ օգտին և յարգելով Հայոց ազգի կամը: Խաղաղութիւն և կամակցութիւն են անհրաժեշտ պայմանք ժողովրդեան և նրա հոգեւոր հովիւներու մէջ »: (Անդ. յօդ. Իա):

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

# ԻՆՉՈՒ ԵՂԱՆ ՓՈՒՇԵՐԸ

- Ահա՛, փրցուր:
- Կոկոն է դեռ:
- Հոգ չէ. փրցուր...:

Ու ինկաւ, — դալար թուփին ոտքը, ինչպէս մանուկ մ'իր մօր առջեւ, — ամփոփուած, և մօթիւնը կոկոնը, վաղուան գեղեցկութիւնը: — Այդ օրէն սկսեալ՝ վշտահար վարդենին փուշերով զինուեցաւ, կարմրցնելու համար այն ձեռքը, որ կը համարձակի դպչիլ իր կարմիր կուկոններուն:

Թրգմ. Հ. Ղ. ԲԻԵԿԵԱՆ

ՆԵՐՈՒՆԻ ԺԱՄԱՆԱԿԷՆ

## ՀՈՒՈՒՄԷԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ԽԱՐԲԵՐԴԻ ՄՕՏ ԳՏՆՈՒԱՐ

Գեր. Գրեգոր վրդ. Փիլիպպոսեան խարբերդէն մեզ կը հաղորդէ Հոովմէական յետագայ արձանագրութիւնը, օրինակելով բուն քարին վրայէն: Թէ՛ եւ Հայոցս ծառօթ Գերմանացի ճանապարհորդն Լեւման 1898ին այդ կողմերէն անցած միջոց զայն օրինակած և ապա հրատարակած է՝, բայց կարծեմք թէ այդ հրատարակութիւնը շատ քիչերուն միայն ծանօթ է և կամ միայն անուղղակի: Ուստի շնորհակալ ըլլալով մենք մեծարգոյ վարդապետին, զայն կը հրատարակենք հոս նաեւ մեր ընթերցողաց համար, աւելցնելով հայերէն բառացի թարգմանութիւն մը և քանի մը լուսարանութիւններ:

Արձանագրիս գտնուած է խարբերդի հարաւ-արեւելակողմը Կեսարիկ կամ Կարսիկ գիւղին անմիջապէս մօտ բլրակի մը կողմի վրայ, երբ աւանին պէտքն Ուան էֆ. Պալունի սոյն դիրքի վրայ գտնուող Ս. Մամասայ վանքին աւերակները վերականգնել կը փորձէր: Գրուած է սա երկու կոփածոյ քարերու վրայ, որոց իւրաքանչիւրն մի մեղր լայն երկու մեղր երկայն և հինգ հարիւրորդամեղր թանձր, կը բովանդակեն միեւնոյն արձանագրութիւնը քանի մի տառերու ձեւին մէջ միայն տարբերելով իրարմէ, ինչ որ նշանակութիւն չունի մեզի համար:

Արձանագրիս ընթերցումն ինքնին շատ պարզ ըլլալով՝ աւելորդ կը համարենք բնագրին ամբողջացումը.

1. CIL. Nr 6741/2. հմտ. 6743. (« Հանդէս Ամս. » 1907 Ա. 24. տաւ. 1 ).